

«Ինեկոբանկ» ՓԲԸ գործունեության ակնարկ և ֆինանսական վերլուծություն

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (Բանկ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 1996թ-ին: Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Սկսելով միայն մեկ մասնաճյուղով և ընդամենը մի քանի նվիրված աշխատակիցներով՝ այսօր Բանկն ունի 25 մասնաճյուղ, որոնք տեղաբաշխված են Գյումրի, Վանաձոր, Արմավիր, Աշտարակ, Աբովյան, Արտաշատ և Երևան քաղաքներում:

Հիմնադրման պահից Բանկն իրականացրել է հետևողական աշխատանք՝ հավատարիմ հաճախորդներ ներգրավելու, բանկային բազմատեսակ ծառայություններ մատուցելու և դրանց տեսականին անընդհատ ընդլայնելու, սպասարկման բարձր որակ ապահովելու, Բանկի գործընկերների հետ կապերն ամրապնդելու ուղղությամբ՝ հետևելով ֆինանսական շուկայի զարգացման միտումներին:

2024թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկը հայաստանյան առաջատար նորարարական և խոշոր բանկերից մեկն է՝ իր կայուն դիրքը զբաղեցնելով ՀՀ բանկային համակարգի լավագույն հնգյակում:

2024թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկի ընդհանուր ակտիվները հասել են 655,7 մլրդ ՀՀ դրամի՝ նախորդ տարվա վերջի համեմատ աճելով 11%-ով: Հարկ է նշել, որ 2019-2024թթ. ժամանակահատվածում Բանկի ակտիվների միջին տարեկան աճի տեմպը (CAGR) կազմել է տպավորիչ 15,8%: Բանկի ակտիվների կառուցվածքում շարունակում են գերակշռել վարկերը, որոնք կազմում են եկամտաբեր ակտիվների 68,3%-ը: Միևնույն ժամանակ, Բանկը վերջին տարիներին հետևողականորեն ավելացրել է ներդրումները արժեթղթերում՝ 2019-2024թթ. ժամանակահատվածում ապահովելով 41,1% միջին տարեկան աճի տեմպ: Արդյունքում, արժեթղթերի տեսակարար կշիռը եկամտաբեր ակտիվներում հասել է 25,3%-ի, ինչը նպաստում է ակտիվների պորտֆելի դիվերսիֆիկացմանը և ռիսկերի արդյունավետ կառավարմանը:

2024թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկի ընդհանուր պարտավորությունները կազմել են 565,4 մլրդ ՀՀ դրամ: Հաճախորդներից ներգրավված ավանդների ծավալը հասել է 427,3 մլրդ ՀՀ դրամի՝ նախորդ տարվա վերջի համեմատ աճելով 4,9%-ով:

Ընդհանուր կապիտալը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 90,3 մլրդ ՀՀ դրամ: 2024թ. առաջին կիսամյակի արդյունքներով Բանկի զուտ շահույթը (հարկումից հետո) կազմել է 15,5 մլրդ ՀՀ դրամ՝ ապահովելով ակտիվների շահութաբերության (ROA) 5,0% և կապիտալի շահութաբերության (ROE) 32,8% ցուցանիշներ: Այս երկու ցուցանիշներով Բանկը համակարգում զբաղեցրել է համապատասխանաբար 3-րդ և 2-րդ հորիզոնականները: Բանկը նաև ծախսերի և եկամուտների հարաբերակցության (CIR) ցուցանիշով ավանդաբար գտնվում է

առաջատար դիրքերում, ինչը վկայում է ընդհանուր և վարչական ծախսերի արդյունավետ կառավարման մասին:

Բանկի գործունեության վրա ազդող որոշ էական գործոններ

Վերջին տարիների աշխարհաքաղական զարգացումների հետևանքով ձևավորված աննախադեպ մեծ անորոշությունների շարունակման պայմաններում, ի շնորհիվ գլոբալ միտումների զգույն մոնիտորինգի, ճկուն ռազմավարությունների որդեգրման և միջազգային գործընկերությունների խթանման՝ Բանկին հաջողվել է արդյունավետորեն բացահայտել և կապիտալիզացնել այս մարտահրավերներում ներառված հնարավորությունները՝ դրանք վերածելով տնտեսական օգուտների և բարձրացնել Բանկի արժեքը:

Մասնավորապես, ղեկավարության կողմից ձեռնարկված ռիսկերի կառավարման միջոցառումների շնորհիվ Բանկի ընդհանուր իրացվելիության և իրացվելիության ծածկույթի գործակցի (LCR) ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 27,3% և 165,77%, իսկ ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 16,07%: Չնայած համակարգի միջինից էապես բարձր եկամտաբերությանը՝ Բանկին հաջողվել է նաև հետևողականորեն ապահովել ակտիվների պորտֆելի որակի ընդունելի մակարդակ: Դա արտացոլված է վարկային ռիսկի արժեքի (CoR) և չաշխատող վարկերի (NPL stage 3) ցուցանիշներում՝ համապատասխանաբար 0,2% և 1,1%:

Պլանավորվում է բարելավել վաճառքի գործող ուղիները, մշակել և կիրառել խաչաձև վաճառքների նոր մեխանիզմներ, հանդես գալ հաճախորդների համար հարմար և շահավետ նոր առաջարկներով: Միտված լինելով իրագործել իր առաքելությունը՝ մարդկանց նպատակների իրագործման համար հնարավորություններ ստեղծելը՝ մատուցելով իրենց պահանջներին համահունչ ֆինանսական ծառայություններ, վերջին երեք տարիների ընթացքում Բանկը ներդրել է 20-ից ավելի նոր պրոդուկտներ՝ կիրառելով նորարարական լուծումներ: Հատկաշահակ է վերջին տարիներին sprintonline.am հարթակի գործարկումը և զարգացումը, որը զգալի ճկունություն է տալիս վարկավորման ոլորտում՝ ինչպես Բանկի գործող, այնպես էլ ապագա հաճախորդների համար:

Բանկի որդեգրած շահաբաժնային քաղաքականությունը հիմնված է երկու կարևոր սկզբունքների վրա՝ Բանկի ակտիվների հետագա աճի համար անհրաժեշտ կապիտալիզացիայի մակարդակի ապահովում և բաժնետերերին շահաբաժինների վճարման անընդհատության ապահովում: Բանկը մշտապես ձգտում է բարելավել կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառումը: «Ինելեոբանկ» ՓԲԸ-ն ունի խորհրդի մեկ անկախ անդամ՝ պարոն Դմիտրո Տոլստիկը:


Բանկի միջոցների տեղաբաշխման քաղաքականություն

Բանկի միջոցների տեղաբաշխման քաղաքականություն Ընդհանուր առմամբ, Բանկի միջոցների տեղաբաշխման քաղաքականությունն առաջիկա երեք տարիներին ուղղված կլինի եկամտաբեր ակտիվների տեսակարար կշռի պահպանմանը՝ միաժամանակ ապահովելով վարկերի վերադարձելիության և իրացվելիության անհրաժեշտ մակարդակը: Վարկային պորտֆելի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում 2024-2025թթ. նախատեսվում է պահպանել 58-59% հարաբերակցության շրջանակներում: Բանկը շարունակելու է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի քաղաքականությունը՝ վարկավորում իրականացնելով հետևյալ ուղղություններով՝ ՓՄՁ վարկավորում, հիփոթեքային վարկավորում և սպառողական վարկավորում՝ շեշտը դնելով վարկավորման հարմարավետության և բարձր որակի վրա: Օգտվելով ներկայիս միջազգային տնտեսական իրավիճակից՝ Բանկը նաև դիտարկում է առկա հնարավորությունները ներդրումային բիզնեսից առավելագույն օգուտ քաղելու համար:

Բանկի ֆինանսավորման աղբյուրները


2024թ. առաջին կիսամյակի արդյունքներով Բանկի կողմից ներգրավված փոխառու միջոցների կազմում ամենամեծ բաժինը՝ 78,7%-ը, կազմում են հաճախորդներից ներգրավված ավանդները, որի 48,3%-ը կազմում են ժամկետային ավանդները: Հաճախորդներից ներգրավված միջոցներ/հաճախորդներին տրամադրված վարկեր հարաբերակցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 1,1: Ներգրավված փոխառու միջոցների կազմում 11,0% են կազմում գործընկեր ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները:

Ավանդային պորտֆելի շարունակական աճը և գործընկերներ կազմակերպությունների շրջանակի ընդլայնումը վկայում է Բանկի նկատմամբ հաճախորդների և գործընկերների բարձր վստահության մասին:



Խորհրդի նախագահ

Ավետիս Բալոյան



Խորհրդի անդամ

Կարեն Սաֆարյան